ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 3(53), 29 ապրիլի, 2023թ.

ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 13-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ՖՈՐՈՒՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՆԱԵՎ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԸ



Չինաստանի Ժողովրդական Հանրային անվտանգության համալսարանի նախաձեռնությամբ ապրիլի 19-ից 21-ը կայացավ «Իրավապահ համակարգը և ոստիկանության ու հասարակության փոխհարաբերությունները» թեմայով ոստիկանական միջազգային 13-րդ ֆորումը:

Միջոցառմանը մասնակցում էին 20 երկրների ոստիկանական հաստատությունների ներկայացուցիչներ, որոնցից 58-ը հանդես եկավ ելույթով:

Մասնակիցներին ողջունեց ՉԺՀ հանրային անվտանգության համալսարանի պետ, պրոֆեսոր Ցաո Շիքուանը՝ նշելով, որ այս միջոցառումը միտված է լավագույն փորձը, ձեռքբերումները փոխանակելու և է՛լ ավելի ամրապնդելու արդեն իսկ առկա սերտ համագործակցությունը:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրն առցանց եղանակով ներկայացնում էին Կրթահամալիրի պետ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը, Ակադեմիայի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության մայոր Գարիկ Խուդոյանը, Ակադեմիայի առկա անվճար ուսուցման երրորդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Գեռա Սիրադեղյանը, երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Անգելինա Հովհաննիսյանը:

Մ. Մուրադյանը հանդես եկավ «ՀՀ-ում ոստիկանության և հասարակության միջև փոխհամագործակցության վերաբերյալ որոշ հիմնահարցեր» թեմայով զեկույցով: Անդրադարձ կատարվեց ոստիկանության և հասարակության միջև առկա համագործակցության կարևորությանը, այն է՛լ ավելի ամրապնդելուն միտված քայլերին և այլ հիմնախնդիրներին:

Զեկույցով հանդես եկավ նաև Գ. Խուդոյանը՝ ներկայացնելով ոստիկանության և քաղաքացիների միջև ներդաշնակ փոխհամագործակցություն ստեղծելու վերաբերյալ հիմնահարցերը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹԵՑԻՆ ՄԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

Մարտի 1-ից 31-ը տեղի է ունեցել ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի կազմակերպած “Who Will Believe My Verse in Time to Come” միջազգային մրցույթը՝ վավերական բանաստեղծության լավագույն բանաստեղծական թարգմանության համար: Մրցույթին մասնակցեց տարբեր երկրների ՆԳՆ համակարգի 18 ուսումնական հաստատություն՝ 211 սովորող:

Մասնագիտական ժյուրին ընտրեց 20 հաղթողի, որոնց թվում էր ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի 4 սովորող՝ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի առկա անվճար ուսուցման սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Արմեն Աղաբեկյանը, 1-ին կուրսի սովորող, կրտսեր սերժանտ Լիդիա Գրիգորյանը, 1-ին կուրսի սովորող, կրտսեր սերժանտ Միլենա Ասրյանը և ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման սովորող Զարուհի Պետրոսյանը:

Բացման խոսքում Կրթահամալիրի լեզուների ամբիոնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Գալինա Ռուսակովան նշեց, որ Հայաստանում առաջին թարգմանությունները կատարվել են դեռևս 405 թվականին: Այդ ժամանակ ստեղծվեցին առաջին թարգմանչական դպրոցները, որոնք զբաղվում էին թարգմանչական գործունեությամբ: Առաջին հեղինակներից և թարգմանիչներից շատերը ոչ միայն մեծարվեցին որպես գիտնականներ, այլև սրբադասվեցին: «Կատարվել են թարգմանություններ ոչ միայն հունարենից, լատիներենից, արաբերենից, վրացերենից, պարսկերենից, այլև հին ֆրանսերենից, եթովպերենից, ռուսերենից, անգլերենից, իտալերենից, լեհերենից և իսպաներենից: Այն լեզուներից, որոնցից կատարվել են թարգմանություններ, հնարավոր էր կազմել Բաբելոնի աշտարակը: Հայերեն թարգմանությունների շնորհիվ պատմության համար պահպանվել են բազմաթիվ եզակի գրական ստեղծագործություններ, որոնց բնագրերը կորել են»,- ասաց Գ. Ռուսակովան:

Հաղթողները կարդացին իրենց թարգմանությունները, փոխանակվեցին տպավորություններով և քննարկեցին թարգմանության առանձնահատկությունները:

Որոշվեց նման մրցույթները դարձնել ամենամյա:

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ՝ ՌԴ ՆԳՆ ՌՈՍՏՈՎԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի և ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինստիտուտի միջև ստորագրված 2023թ. աշխատանքային պլանի համաձայն՝ ապրիլի 6-ին Ռոստովի իրավաբանական ինստիտուտի սովորողների համար տեղի ունեցավ «Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործումը քրեական դատավարությունում» թեմայով առցանց դասախոսություն: Այն անցկացրեց Կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր, ի.գ.թ., դոցենտ Ազատ Բագրատյանը:

Քննարկվեցին ՀՀ-ում քրեական դատավարությունում ՕՀԳ արդյունքները գործածելու վերաբերյալ արդի հիմնախնդիրները, համեմատահրավական վերլուծություն անցկացվեց ՀՀ և ՌԴ օրենսդրության միջև, քննարկվեցին ՕՀԳ մարմինների՝ տվյալ խնդրին առնչվող իրավական ու գործնական առանձնահատկությունները:

Ռոստովի իրավաբանական ինստիտուտի սովորողներն ակտիվորեն մասնակցում էին դասախոսությանը՝ առաջադրելով իրենց հուզող մասնագիտական որոշ հարցեր:

Հատուկ դասախոսությունն ամփոփվեց ակտիվ քննարկումներով ու սպառիչ պատասխաններով:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 6-ՐԴ ՆԻՍՏԸ

Ապրիլի 18-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2023 թվականի 6-րդ նիստը: Օրակարգի հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց փոփոխություններ կատարել ուսումնական գործընթացը կանոնակարգող հիմնական փաստաթղթերում և կարգերում: Փոփոխությունների հիմնական նպատակն այն էր, որ ՀՀ ներքին գործերի նախարարության ձևավորումից հետո, ուսումնական գործընթացով պայմանավորված, որոշակի գործառույթներ այսուհետ պետք է իրականացվեն ՆԳՆ կառուցակարգին համապատասխան, սակայն այդ ամրագրումները դեռևս չկային կրթահամալիրի ներքին իրավական ակտերում:

Գիտական խորհրդի որոշմամբ անհրաժեշտ փոփոխություններ կատարվեցին հետևյալ կարգերում՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում դիմորդների ընտրության և ընդունելության կարգ»-ում, «ՀՀ ոստիկանության կրթահամալիրից սովորողների ազատման, ուսումնառության ընդհատման, վերականգնման և տեղափոխման կարգ»-ում, «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողներին անվանական կրթաթոշակների հատկացման կարգ»-ում, ակադեմիայի, քոլեջի և ուսումնական կենտրոնի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերում:

ՀՀ ոստիկանության 105-րդ տարեդարձի կապակցությամբ Կրթահամալիրի որոշ ծառայողներ բարեխիղճ ծառայության համար պարգևատրվեցին մեդալներով և կրծքանշաններով:

ՀՀ ներքին գործերի նախարար Վ. Ղազարյանի 14.04.2023թ. հրամանով՝

- Ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու, հասարակական կարգի ապահովման, հանցավորության դեմ պայքարի և մարտական պատրաստականության գործում բարձր ցուցանիշներ ապահովելու համար, ինչպես նաև ՀՀ ոստիկանության օրվա՝ ապրիլի 16-ի կապակցությամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արտակ Հովհաննիսյանը պարգևատրվեց «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով:

- ՀՀ վերապատրաստման կենտրոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գագիկ Սլավիկի Թադևոսյանը պարգևատրվեց «Ոստիկանության գերազանց ծառայության համար» կրծքանշանով:

ՀՀ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Հովհաննիսյանի 10.04.2023թ. հրամանով՝

- Ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու, հասարակական կարգի ապահովման, հանցավորության դեմ պայքարի և մարտական պատրաստականության գործում բարձր ցուցանիշներ ապահովելու համար, ինչպես նաև ՀՀ ոստիկանության օրվա՝ ապրիլի 16-ի կապակցությամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Սոնա Արմենի Ավանեսյանը պարգևատրվեց «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Ս. Խաչատրյանի 10.04.2023թ. հրամանով՝

- Ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու, ինչպես նաև ՀՀ ոստիկանության օրվա՝ ապրիլի 16-ի կապակցությամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ հետախուզական գործունեության և և քրեագիտության ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Հարությունի Սեմերջյանը պարգևատրվեց «Ձեռքի ժամացույց» հուշանվերով:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանի 17.04.2023թ. հրամանով՝

- Ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու, ինչպես նաև ՀՀ ոստիկանության օրվա՝ ապրիլի 16-ի կապակցությամբ մի խումբ ծառայողների և սովորողների հայտարարվել է «Շնորհակալություն»:

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՆԻՍՏ՝ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՓՈՐՁԱԿԱՅԱՆՈՒՄ

Ապրիլի 14-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի փորձակայանում դերային խաղի ձևաչափով անցկացվեց ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնին կից «Հանցագործությունների բացահայտման և քննության հիմնահարցերի հետազոտության» գիտական խմբակի 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ նիստը:

Նիստին մասնակցում էին ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը, գիտական խմբակի անդամները և գիտական բաժնի ներկայացուցիչը:

Հանդիպման ընթացքում ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման երրորդ կուրսի սովորողները, ձևավորելով թիմ, քրեագիտական փորձակայանի սիմուլյացիոն լսարանում իրականացրին դեպքի վայրի զննություն:

Զննության իրականացման ընթացքում թիմը գործնականորեն ըստ փուլերի ցուցադրեց դեպքի վայրում իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները, դրսևորեց մասնագիտական բարձր գիտելիքներ և հետքաբանական օբյեկտների հետ ճիշտ աշխատանքի հմտություն:

Դեպքի վայրի զննության արդյունքներից հետո ծավալվեց բուռն քննարկում:

«ՄԱՐԴՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 10-ին Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման 3-րդ կուրսի «Կրիմինալիստիկա» առարկայի «Մարդու արտաքին պատկերի մասին կրիմինալիստիկական ուսմունքը» թեմայով նախատեսված դասախոսությունն անցկացրին ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ Օպերատիվ հետախուզական տեղեկատվության և համակարգչային հանցագործությունների դեմ պայքարի վարչության պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Աբրահամյանը և ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ Օպերատիվ հետախուզական տեղեկատվության և համակարգչային հանցագործությունների դեմ պայքարի վարչության Օպերատիվ հետախուզական տեղեկատվության անվտանգության և վերահսկողության բաժնի պետ, ոստիկանության կապիտան Վ. Սարգսյանը:

Ներկայացվեց ուսումնասիրվող թեմայի նշանակությունը հանցագործությունների բացահայտման գործընթացում, արտաքին հատկանիշներով անձի նույնացման առանձնահատկությունները, համակարգչային ծրագրերի ներգրավվածությունն ու նշանակությունն այդ գործընթացում, դրանց աշխատանքի սկզբունքները: Ինտերակտիվ մեթոդով դասախոսությունը սովորողներին հնարավորություն տվեց տալ իրենց հետաքրքրող բազմաթիվ հարցեր և ստանալ սպառիչ պատասխաններ:

ՀԵՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՆԱԵՎ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Ապրիլի 3-ին տեղի ունեցավ ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի կազմակերպած միջազգային գիտական ֆորումի շրջանակում անցկացվող «Գիտության և պրակտիկայի արդի հիմնախնդիրները» թեմայով 11-րդ միջազգային գիտագործնական համաժողովը, որին ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայից մասնակցում էր իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 2-րդ կուրսի սովորող Լուիզա Խաչատրյանը: Վերջինս ներկայացրեց «Արհեստական բանականության տեղը իրավահարաբերության տարրերի շարքում» թեմայով զեկույցը: Աշխատության գիտական ղեկավարն էր ՀՀ ՆԳՆ ոստիկանեաան կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության կապիտան Գայանե Մարուքյանը:

Կազմակերպիչները նշեցին, որ մասնակցության հայտ ներկայացվել են բազմաթիվ երկրներից, սակայն կազմակերպչական-խմբագրական կոմիտեն ընտրել է լավագույն աշխատանքները, որոնց հեղինակներն էլ հանդես եկան զեկույցներով:



Լուիզա Խաչատրյանի ելույթի շուրջ ակտիվ քննարկում ծավալվեց, և այն գնահատվեց որպես արդիական և ուսանելի ելույթ: Ունկնդիրները հույս հայտնեցին, որ զեկույցի թեմայով ևս կկատարվեն հետազոտական աշխատանքներ:

ԱՐԴԻԱԿԱՆ ԹԵՄԱ՝ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ապրիլի 7-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնը կազմակերպել էր հերթական գիտական խմբակ՝ «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ընթացակարգին վերաբերող հիմնախնդիրները. իրավական կարգավորում և գործնական կիրառության հարցերը» թեմայով, որին մասնակցում էին ամբիոնի դասախոսական կազմը, գիտական խմբակի անդամ սովորողներ, ինչպես նաև առկա անվճար և վճարովի 2-րդ կուրսերի այլ ուսանողներ: Գիտական խմբակը կազմակերպել էր ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության կապիտան Գայանե Մարուքյանը: Քննարկվող թեման արդիական էր և կարևոր թե՛ իրավաբանների համար և թե՛ առհասարակ:

Քննարկումը վարում էր ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պայմանագրային հիմունքներով դասախոս, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության փաստաթղթերի ուսումնասիրման և դատական գործերով բաժնի պետ Դավիթ Բայրամյանը: Նա նախկինում զբաղեցրել է Կադաստրի կոմիտեի օրենսդրության մշակման և որակավորման հարցերի բաժնի գլխավոր իրավաբանի պաշտոնը, ինչի բերումով ներկայացված թեմայի շուրջ ծավալած քննարկումը կրում էր գործնական բնույթ:

Հյուրը ներկայացրեց Կադաստրի կոմիտեի կառուցվածքն ու գործունեության հիմնական ուղղությունները, անդրադարձավ կոմիտեի գործունեության սկզբունքներին, ապա պատասխանեց սովորողների հարցերին, որոնք բազմաթիվ էին և բազմաոլորտ՝ սկսած իրավական խնդիրներից, մինչև գործնական կիրառության հարցեր: Քննարկման ավարտին մասնակիցները շնորհակալություն հայտնեցին կառուցողական երկխոսության համար և հույս հայտնեցին, որ նման քննարկումները շարունակական բնույթ կկրեն:

ԻՄ ՍՏԵՂԾԱԾ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ ԲՈԼՈՐ ՀԵՐՈՍՆԵՐՆ ԱՆՄԱՀ ԵՆ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա վճարովի ուսուցման 2-րդ կուրսի սովորող Մելսիդա Ավետիսյանի հետ:

Գնացինք...

- Խոսենք մանկությունից: Ինչպիսի՞ աղջնակ էիր, ի՞նչ երազանքներ ու հեքիաթներ կային մանկության տարիներին:

- Փոքր տարիքից աչքի եմ ընկել իմ ակտիվությամբ, աշխուժությամբ, հարցասիրությամբ: Ժպտերես, կայտառ աղջնակ էի, ապրում էի իմ ստեղծած աշխարհում, որտեղ ամեն ինչ այնքան հարթ ու դյուրին էր թվում: Երազանքներ շա՜տ ունեի, բայց տարիքի հետ դրանք դարձան ցանկություններ, ապա՝ նպատակներ, որոնք կանխորոշում են իմ ամեն օրը:

- Դպրոց. նոր, ավելի հասուն կյանք: Ինչպիսի՞ն էին դպրոցական տարիները: Ի՞նչ կհիշես: Կպատմե՞ս այդ տարիներից:

- Դպրոցում միշտ լավ եմ սովորել, ավարտել եմ գերազանցությամբ: Դպրոցական տարիներս եղել են գերծանրաբեռնված, քանի որ դասերից զատ մասնակցում էի բոլոր առարկայական օլիմպիադաներին, ինտելեկտուալ մրցույթներին, մշակութային միջոցառումներին, որի արդյունքում էլ ձեռք եմ բերել այսպես կոչված «գերազանցիկի փսիխոլոգիա»: Անդամակցում էի դպրոցում գործող գրեթե բոլոր խմբակներին, միշտ ամեն ինչի կիզակետում էի, որը շարունակվում է նաև Կրթահամալիրում:

- 2020 թվականը բոլորիս համար շրջադարձային եղավ: Ի՞նչ փոխվեց քեզ մոտ 2020 թվականից հետո:

- 2020թ. շատ բան փոխեց իմ կյանքում, քանի որ չարաբաստիկ պատերազմում կորցրի եղբորս: Մի քանի րոպեում փշրվեց իմ հեքիաթային մոլորակը, որտեղ ես միշտ երազկոտ աղջնակ էի: Ասել, թե հաղթահարել եմ այդ ցավը, կնշանակի ոչինչ չասել, ուղղակի մի պահ սթափվեցի ու հասկացա, որ ես դեռ պատասխանատու եմ ծնողներիս առաջ: Եվ որոշեցի սովորել, առաջ գնալ, հաջողություններ հասնել երկուսիս փոխարեն՝ դրանով իսկ ժպիտ նկարելով ծնողներիս դեմքին: Այսօր ես անում եմ ամեն հնարավորը, որպեսզի լինեմ լավագույնը, առաջինը, իսկ գրանցած յուրաքանչյուր հաջողություն կիսում եմ Եղբորս հետ, քանի որ Կրթահամալիրում սովորելը մեր երկուսի նպատակն էր, որը, ցավոք, միայնակ եմ իրագործում:

- Փոքրիկ իշխան. Անտուանդե Սենտ-Էկզյուպերի... Ինչպիսի՞ն է քո ստեղծած այլ մոլորակը.

- Իմ ստեղծած մոլորակը մեր հաղթանակած հայրենիքի տեսքն ունի, որտեղ հավերժ թևածում է խաղաղությունը, որն ապրում է ոչ թե իր որդիների կյանքի, այլ նրանց կերտած հաղթանակների շնորհիվ: Իմ Մոլորակը հերոսների մոլորակ է, որտեղ բոլորն անմահ են:

- Ի՞նչ է գիրքը քեզ համար:

- Գիրքն ինձ համար գիտելիքների աղբյուր է, մտքի վարժարան, սեփական կարծիքի դարբնոց ու մտահորիզոնի ընդլայնման լավ հնարավորություն: Ընթերցանությունը միշտ էլ իմ տարերքն է եղել:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Մանկուց ստեղծագործել եմ, սակայն պատերազմը փոխեց ստեղծագործություններիս թեման ու բովանդակությունը: Հիմա մեծամասամբ գրում եմ Կարոտի, հայրենիքի, սպասման ու հավատի մասին: Վերջերս լույս տեսավ իմ առաջին հեղինակային գիրքը՝ «Հրեշտակապետը», որն ամբողջովին նվիրված է եղբորս: Ամենատարբեր իրավիճակներում ստեղծագործելն ինձ շատ է օգնում:

- Ինչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

- Երազում եմ, որ իրականանա ամենանվիրական երազանքս:

Այնպիսի ժամանակներ ենք ապրում, որ, կարծում եմ, բոլորս նույն երազանքն ունենք. ապրել խաղաղ ու ապահով հայրենիքում, ապրել արժանի նրանց, ովքեր կյանք են դրել հայրենիքի փրկության զոհասեղանին:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- 12 տարեկան էի, երբ իմացա Կրթահամալիրի մասին ու որոշեցի, որ իրավաբան եմ դառնալու: Այդ տարիքից արդեն պատկերացնում էի ինձ Կրթահամալիրում, իսկ կյանքն ամեն պահի ինձ ապացուցում էր, որ ճիշտ մասնագիտություն եմ ընտրել: Անգամ հիմա, երբ արդեն իրավաբան դառնալու ճանապարհին եմ, ավելի ու ավելի եմ համոզվում, որ ճիշտ որոշում եմ կայացրել:

- Իրավաբանություն. երեք բառով նկարագրի՛ր՝ ինչ է քեզ համար այն:

- Ինքնավստահություն, ազատություն, պաշտպանվածություն:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

- Ես նորից ու նորից կընտրեի իրավաբանությունը, քանի որ այն իմ տարերքն է, բայց ծնողներս պնդում են, որ ես կարող եմ նաև լավ բժիշկ լինել:

- Ի՞նչ խորհուրդ կտաս նրանց, ովքեր ցանկանում են ընտրել Կրթահամալիրը:

- Կարծում եմ՝ դա կլինի ամենաճիշտ ու լավագույն ընտրությունը. ուղղակի դա պետք է գիտակցված լինի. նախ՝ սեր դեպի մասնագիտությունը, այնուհետև՝ սեր դեպի քո ապագա ԵՍ-ը:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Ես անդադար կարող եմ խոսել Հայրենիքից, քանի որ այն հավաքական կերպար է, այն կյանք է առել հազարավոր քաջերի ընդհատված կյանքերի հաշվին: Խոսել Հայրենիքից, նշանակում է խոսել մեր հերոս տղերքի սխրանքների, կերտած պատմության ու իրենց կյանքի հաշվին հաղթանակներով բացված արշալույսների մասին: Իսկ Հայոց արշալույսները միշտ հաղթանակներով են բացվելու:

Բլից հարցեր

Պատասխանում ենք կարճ և արագ

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Համառ, ուժեղ, նպատակասլաց:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Ես ունեմ ևս մեկ հնարավորություն:

- Օրն սկսում ես ժամը...

- 7:00-ին:

- Սիրածդ աֆորիզմը:

- Պարզությունը մեծագույն նրբագեղությունն է...

- Սիրելի զբաղմունքդ:

Գրել, ստեղծագործել:

- Խորհուրդ, որը կտայիր...

- Մինչ արձագանքելը մտածի՛ր,
Նախքան ծախսելը վաստակի՛ր,
Մինչ քննադատելը սպասի՛ր,
Նախքան հանձնվելը փորձի՛ր:

- Դու իրավաբան ես և...

- Օրինապահ քաղաքացի:

- Թե՞յ, թե՞ սուրճ:

- Սուրճ:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին):

- Միշտ ժպտալ է պետք...

Հարցազրույցը վարեց

ոստիկանության կապիտան Մարիետա Խերանյանը

ՀԱՅՈՑ ՎԻՇՏԸ

Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրն ամեն տարի նշվում է ապրիլի 24-ին:

Այն մշտապես նշվել է աշխարհի բորոր անկյուններում, որտեղ կա հայ, իսկ հայ կա ողջ աշխարհում, քանզի երիտ թուրքերի ձեռամբ հայրենազրկվեց ու անխնա կոտորվեց Արևմտյան Հայաստանի ողջ հայությունը: Այսպես ձևավորվեցին աշխարհի սփյուռքահայ համայնքները: Խորհրդային Հայաստանում ցեղասպանության զոհերի հիշատակի օրն առաջին անգամ պետական մակարդակով նշվել է 1965-ի ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցին:

Մայրաքաղաքի Ծիծեռնակաբերդի բարձունքում Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիրի կառուցումից հետո՝ ամեն տարի ապրիլի 24-ին, համաժողովրդական երթ է կատարվում դեպի համալիր:

Հայոց պատմությունը դարերով պայքարի պատմություն է, այն կարծես մեծ և ստվար գրքի է նման, որի էջերը լի են բացառիկ իրադարձություններով, հերոսական դրվագներով, բայց, ավա՜ղ, նաև արյունով ու տառապանքով, զրկանքներով, բաց վերքերով ու սպիներով: Այդ գիրքն ասես արյան մեջ թաթախված գրչով գրված լինի, իսկ գրքի կազմն արյունով ողողվեց 1915 թվականին՝ հայերի կոտորածից հետո, երբ թուրքերը բորենու նման հոշոտեցին մի ամբողջ ազգ: Այդ թվականը հավերժ կմնա հայ ժողովրդի հիշողության մեջ: Արևմտյան Հայաստանում թուրքական բիրտ կառավարության մշակած ծրագրով տեղահանվեց, տարիների քրտինքով ձեռք բերածը թալանվեց, սովից ու քաղցից տանջամահ արվեց ու մորթվեց մի ողջ ժողովուրդ: Թուրք ավազակներն անխնա կոտորեցին անզեն տղամարդկանց, թրատեցին հղի կանանց, մանկահասակ երեխաների ու ծերերի: Գլխատվեց ժամանակի ողջ մտավորականությունը՝ Գրիգոր Զոհրապ, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ... Մարդակեր թուրքը որոշել էր բնաջնջել երկրի երեսից իրեն խանգարող հայերին, քանի որ Արևմտյան Հայաստանը յուրացնելու ծրագիր ուներ: կատարվեց 20-րդ դարի ամենամեծ ոճիրը՝ Հայոց ցեղասպանությունը, որին չդիմացավ հայոց վարդապետը՝ Կոմիտասը. նա ավերված հայրենիքի կորստի ցավից խելագարվեց: Շատ երկրներ մինչև այսօր էլ չեն ճանաչել Մեծ եղեռնը, չի ճանաչել նաև Թուրքիան: Բայց, ի վերջո, Թուրքիան պարտավոր է լինելու մի օր ճանաչել հայոց վիշտը: Հայերը երբեք չեն կորցնի այն հույսը, որ օրերից մի օր կհաղթանակի արդարությունը: Այն պահից, երբ աշխարհի պատմության մեջ գրվեց «թուրք» բառը, դա եղավ դաժանությունների, ագահության, աշխարհը սեփականացնելու հիվանդագին մոլուցքով տարված գազանաբարո մի երևույթի սկիզբը:

Ապրիլի 24-ը հայ ազգի ծննդյան վկայականի մեջ կարելի է նշել որպես մահվան օր: Այս ցավով ապրեցին ոչ միայն մեր նախնիներն ու ծնողները, այլև հիմա այդ ցավը, որպես բաց վերք, մորմոքում է յուրաքանչյուրիս սրտում:

Տարիներ առաջ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի խորհրդանշան ընդունվեց անմոռուկ ծաղիկը, որի անվան հիմքում տարբեր լեզուներով միևնույն իմաստն է՝ հիշի՛ր: Սա հարյուրամյակի կարգախոսն է ու ուղերձը: Ծաղիկը հնգաթերթ է, որը խորհրդանշում է այն հինգ մայրցամաքները, որտեղ հանգրվան գտավ ցեղասպանությունից մազապուրծ հայ ժողովուրդը, իսկ մանուշակագույնը հայ ժողովրդի ինքնագիտակցության մեջ է տպավորվել հայ առաքելական եկեղեցու սպասավորների հանդերձանքից: Մեջտեղի սև գույնը խորհրդանշում է ցեղասպանության արհավիրքն ու սարսափը, նաև այն մեծ վիշտը, որ ունեցավ հայ ժողովուրդը: Ներսի ճառագայթաձև բաց մանուշակագույնը խորհրդանշում է Ցեղասպանության դատապարտմանն ու ճանաչմանը մասնակից լինելը: Դեղին գույնը խորհրդանշում է արևային լույսը, որն ապրելու ու արարելու հույս է տալիս՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի տեսքով՝ 12 մույթերով:

Ցեղասպանության խորհրդանիշ անմոռուկը միշտ մեր սրտում ու մտքում կլինի, թեկուզ անցնեն դարեր:

Տասնամյակները հարյուրամյակ դարձան, սակայն հայոց վերքը չսպիացավ: Եղեռնի մասին հնարավոր չէ խոսել առանց արցունքի և հուզմունքի, որովհետև կորել է ամբողջ մի քաղաքակրթություն՝ հայ ժողովրդի զգալի մասը: Անցյալը երբեք չի մոռացվի:

Աշխարհում մի գետ կա, բայց այդ գետը ոչ մի քարտեզի վրա չկա, այն 1915 թվականի անմեղ զոհերի արյան գետն է, որ, հոսելով մարդկային խղճի ու արդարության հովիտներով, վերջապես հասնելու է հատուցման ծովին:

«Մեծ Եղեռնը հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական էջն է: Եվ այն մեզ համար ոչ միայն անմեղ նահատակների հիշատակը խնկարկելու, նրանց առաջ գլուխ խոնարհելու, այլև մեր պատմության՝ անցյալի, ներկայի և ապագայի մասին մտածելու առիթ է: Այն մեզ համար առիթ է արձանագրելու, որ հայ ժողովուրդը սեփական ճակատագրի տնօրինման ավելի ու ավելի մեծ հնարավորություններ ու լծակներ պիտի ունենա, պիտի կարողանա սեփական ճակատագիրն ուրիշների որոշումների տիրույթից սեփական որոշումների տիրույթ տեղափոխել:

Մեկ դար առաջ թուրքերը որոշեցին ոչնչացնել մի ամբողջ ազգ, մի ողջ ժողովուրդ միայն այն պատճառով, որ հայ էին: Ցեղասպանության պատճառով հարյուրավոր երեխաներ լույս աշխարհ չեկան, հարյուրավոր մարդիկ մեռան գաղթի ճանապարհին, հազարավոր մարդիկ թողեցին իրենց հայրենիքը ու գաղթեցին օտար երկրներ, հազարավոր աչքեր արցունքով լցվեցին:

Այդ օրից անցել է արդեն 108 տարի, բայց ցավը մինչև այսօր էլ չի թեթևացել ու էլ ավելի է խորացել: Հայի վերքերը դեռ բաց են, ու այդ ցավը երբեք չի անցնի, քանի որ այն ցավ է հոգու, այլ ոչ մարմնի...

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Էսկիմոսներն ապրում են ցուրտ հյուսիսային կլիմայում: Նրանք շատ լավ որսորդներ են, բայց պատմության մեջ դեռ ոչ մի էսկիմոսի չի հաջողվել պինգվին որսալ:

Ինչու՞:

2. Սենյակում հայտնաբերել էին մի մարդու, որը կախված էր. քննիչներն ընկել էին փակուղու մեջ, որովհետև սենյակում ոչ մի կահույք չկար, տեսանկարահանող սարքերը ցույց են տվել, որ սենյակ ոչ ոք չի մտել, միակ բանը, որ հայտնաբերել էին, մահացած մարմինն էր և ջուր, որը թափված էր հատակին:

Ինչպե՞ս էր այդ մարդը կախվել:

Նախորդ համարում զետեղված հարցերի պատասխանները

1. Բուդապեշտը (Բուդապեշտը ձևավորվել է երկու քաղաքների՝ Բուդայի և Պեշտի միաձուլումից: Այս իրադարձությունը փաստագրված է 1873 թ.):
2. Քաղաքավարությունը

ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ՄԵԾԵՐԸ

Առավոտյան արթնանալով՝ հարցրու քեզ. «Ի՞նչ պետք է անեմ ես այսօր»: Երեկոյան՝ քնելուց առաջ, հարցրու քեզ. «Ի՞նչ եմ ես արել»:

Պյութագորաս

Մեր ամենամեծ թերությունն այն է, որ մենք չափազանց շուտ ենք հանձնվում: Հաջողության ամենափորձված ճանապարհը շարունակաբար ևս մեկ անգամ փորձելն է:

Թոմաս Էդիսան

Դժվար գործն այն հեշտ գործերի կուտակումն է, որոնք դուք պետք է անեիք, բայց չեք արել:

Ջոն Մաքսվելլ

Ես չեմ կարող ձեզ տալ հաջողության բանաձև, բայց կարող եմ տալ անհաջողության բանաձևը. փորձեք դուր գալ բոլորին:

Ջերարդ Սվոուպ

Եթե դու վերցնես սոված շանը և նրա կյանքը դարձնես կուշտ, նա երբեք քեզ չի կծի: Դրանում է շան և մարդու տարբերությունը:

Մարկ Տվեն

Մի՛ ասեք, որ դուք ժամանակ չունեք: Դուք ունեք նույնքան ժամանակ, որքան ունեին Միքելանջելոն, Լեոնարդո դա Վինչին, Թոմաս Ջեֆերսոնն ու Էյնշտեյնը:

Ջեքսոն Բրաուն

Անգամ եթե դուք տաղանդավոր եք և հսկայական ջանքեր եք գործադրում, որոշ արդյունքների համար պարզապես ժամանակ է պետք: Դուք չեք ունենա երեխա 1 ամսից, անգամ եթե ստիպեք հղիանալ 9 կնոջ:

Ուրեն Բաֆֆեթ

Յուրաքանչյուր մարդու կյանքում կա երկու կարևորագույն օր: Մեկն այն օրն է, երբ նա ծնվում է, իսկ մյուսը՝ այն օրը, երբ նա հասկանում է, թե ինչու:

Միակ խոչընդոտը մեր վաղվա ձեռքբերումների ճանապարհին մեր այսօրվա կասկածներն են:

Ֆրանկլին Ռուզվելտ

Աշխարհի ամենասանկ մարդն այն մարդն է, ով կորցրել է իր էնտուզիազմը:

Մեթյու Առնոլդ

Մենք մեր կյանքում գտնում ենք միայն այն, ինչ ինքներս ենք ներդնում նրա մեջ:

Ռալֆ Էմերսոն

Ստեղծագործում են մերոնք

ԱՅՍ ՄԵԾ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Այս մեծ աշխարհի մեր փոքրիկ հողում,
Արևը այնքա՜ն պայծառ է ժպտում,
Ոսկե շողերով երկրիս է փարվում,
Ուր Հայոց անուշ մրգերն են հասնում:

Այս մեծ աշխարհի մեր փոքրիկ հողում,
Հպարտ լեռների մամռոտած գրկում,
Մասիսի կարոտ մեղմ քամիներում
Կապույտ Սևանն է անքուն միշտ ծփում:

Այս մեծ աշխարհի մեր փոքրիկ հողում
Հին երգերի պես ջրերն են վազում՝
Անուշ կարկաչով, զուլալ, վարարուն,
Հայոց դաշտերի ծաղկունքն են բացում:

Այս մեծ աշխարհի մեր փոքրիկ հողում
Անթիվ ցավերից սրտեր են դողում,
Մենք մեր կորցրած ճամփեքն ենք փնտրում,
Անվերջ դեգերում ու հույսով սպասում:

Այս մեծ աշխարհի մեր փոքրիկ հողում
Քարերին դաջված տառերն են խոսում,
Թե մեր պատմության անմահ էջերում
Որտեղից եկել և ուր ենք գնում:

Կարինե Կիրակոսյան
ոստիկանության գնդապետ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73: Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «ՋԱՆԳԱԿ» հրատարակչության տպարանում
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 28.04. 2023թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան